ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՅՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ

23. 02. 2017թ.

No 01/29 - 336

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի
տնօրեն Ա. Հանեշյանին

Ի պատասխան Ձեր 20.02.2017թ. գրության հայտնում ենք որ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից 22.12.2016թ. կնքված թիվ ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-1-1 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ միակողմանի լուծումը պայմանավորված է պայմանագրի և ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտով Ձեր կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմամբ՝ մասնավորապես, Ձեր կողմից չեն ներկայացվել Հավելված 4.2-ին (Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքների մատակարարելու վերաբերյալ) համապատասխան ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատները:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը համաձայն ՀՀ Կառավարության 168-Ն որոշման <<Գնումների գործընթացը կազմակերպման մասին>> 34 կետի բ-ենթակետի՝ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գների համեմատման ժամանակ տվել է առավելություն 15% չափով:

Հայտնում ենք նաև, որ համաձայն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 22 դեկտեմբերի 2016 թվականին կնքված N ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-1-1 ծածկագրով պայմանագրի և 09 հունվարի 2017 թվականին կնքված համաձայնագրի՝ պայմանագրի ընդանուր գինը կազմում է 3 475 155 ՀՀ դրամ և եթե «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 4.2-ին համապատասխան գնային 15% առավելություն չհաշվարկվեր, ապա «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը կկնքեր այլ մասնակիցների հետ պայմանագիր նույն ապրանքատեսակի և քանակի համար ընդամենը 3 012 126 ՀՀ դրամի չափով, տնտեսելով 463 029 ՀՀ դրամ գումար:

Այսպիսով, ևս մեկ անգամ հավաստում ենք, որ 2017 թվականի փետրվարի 16-ից մեր միջև կնքված պայմանագիրը լուծված է:

Ռեկտոր՝ **Կ. Աթոյան**

կատարող՝գնումների համակարգող
Է. Դավթյան
հեռ. 010 593483